ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ. Մարկոսյանի մոտ կայացած խորհրդակցության

13.04.2020թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքներում 01.04.2020թ.-ից սկսված ծրագրերի ընթացիկ աշխատանքների մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

2. Համայնքներից ներկայացված ծրագրերի քննարկում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

ա/ Լոռի Բերդի համայնքապետարան. «Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատի ավարտում, Բովաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում, նույն բնակավայրի բուժկետի շենքի հատակի վերանորոգում», իրականացման ժամկետը՝ 01.05.2020թ. – 31.07.2020թ.

բ/ Գյուլագարակի համայնքապետարան. «Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 01.05.2020թ. – 31.07.2020թ.

3. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի պահանջներին համապատասխան Վաղարշակ Եղիազարյանին՝ Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքներում ծրագրերի խորհրդատու նշանակելու մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

4. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

1. Հաստատել հետևյալ ծրագրերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքապետարան. «Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատի ավարտում, Բովաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում, նույն բնակավայրի բուժկետի շենքի հատակի վերանորոգում», իրականացման ժամկետը՝ 01.05.2020թ. – 31.07.2020թ.

բ/ Գյուլագարակի համայնքապետարան. «Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 01.05.2020թ. – 31.07.2020թ.

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Ստեփանավանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենին՝

ա/ Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրեր ներկայացրած համայնքների հետ ապահովել աշխատանքներ կատարող աշխատակիցների համապատասխան ձևակերպումները:

/ժամկետ՝ 2020թ. ապրիլի 25-ը/

2. Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքների ղեկավարներին՝

ա/ Ապահովել իրականացվող ծրագրում ընդգրկվող աշխատակիցների անհրաժեշտ ձևակերպումները համապատասխան՝ Ստեփանավանի տարածքային զբաղվածության կենտրոնում:

/ժամկետ՝ 2020թ. ապրիլի 25-ը/

բ/ Ֆինանսավորման համար բացել համապատասխան հաշվեհամար /ըստ անհրաժեշտության/, այդ մասին իրազեկելով համապատասխան տարածքային զբաղվածության կենտրոն:

/ժամկետ՝ 2020թ. ապրիլի 30-ը/

3. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

2020թ. համար Հանձնաժողովի կողմից հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի ըստ համայնքների՝ փաստաթղթային փաթեթը եռօրյա ժամկետում տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական գործակալություն»:

/ժամկետ՝ 2020թ. ապրիլի 16-ը/

4. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Գասպարյանին՝

Ապահովել աշխատանքի և զբաղվածության բնագավառում իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանքներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/